# ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

## Ս. ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

*Հաւաստի աղբիւրներից կարող ենք հաղորդել, որ առաջիկայ 1903 թուի սեպտեմբեր ամսին Ազգիս Սրբազնագոյն Հայրապետը ս. Էջմիածնի շինութեան հազար վեց հարիւրամեակի առիթով կկատարէ ս. Միւռոնի օրհնութիւն։*

## ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅԵՐԻ «ԱՆԻ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

*Վիեննայի փոքրաթիւ հայ գաղութը մի համակրելի միտք էր յղացել՝ կազմել մի ընկերութիւն, որի նպատակը պիտի լինի հայկական մատուռ հիմնել Վիեննայում, օգնել չքաւոր հայ ուսանողներին, աղքատներին, շարունակ երթեւեկող գաղթականներին եւ այլն։ Այդ ընկերութեան կանոնադրութիւնը առաջարկուած էր ի հաստատութիւն պատշաճաւոր իշխանութեան եւ կնքուած էր «Անի» անունով։*

*Կանոնադրութիւնը այս օրերս հաստատուած է արդէն Վիեննայի քաղաքապետի կողմից եւ վերադարձուած հայերին ի գործադրութիւն։*

## ՅՈՒՐԵՒԻ (ԴՕՐՊԱՏԻ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ

*Անցեալ ապրիլի 23-ին լրացաւ Դորպատի համալսարանի հարիւրամեակը եւ այդ օրը հանդիսապէս տօնուեց թէ համալսարանի եւ թէ նորա հեռաւոր ուսանողների կողմից։*

*Համալսարանը հիմնուել է դեռ 1632-ին Շվեդիայի Գուստաւ Ադոլֆ թագաւորի ձեռքով, որ տեւեց միայն 24 տարի, որովհետեւ քաղաքին տիրեցին ռուսները եւ պրոֆեսօրները*